




ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵԶԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 21 ՄԱՅԻՍ 1911

ԹԻԻ 19

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. — Երեք տօներ
ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Յակոբ Սրճեցի (Բ.)
Մտածումներ աշխարհի մեծագոյն խորհողներէն
Մարած լամպարը (քերթուած)
ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԸ. — Ուրարտու. — Եզրակացուածին
Սպէրի Ս. Յովնանու վաճըր
Շիրվանզատէ եւ իր Յոբելեանը
Հայկ. Բացեգ. Միոռեան տաճեկան ընդհ. Ժողովը
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՋՆՔԸ. — Շաբթուան լուրեր

ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ
Գ. ԳԱՊՊԷՆՃԵԱՆ
ԽԱԶԻՍԱՐ
ԴՊՐԵՎԱՆՔՅԻ
ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ
Մ. ՍԱՆՈՍԵԱՆ
ԽՄԲ.

»

Տպագր. Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ.
Մուղթան-Համալ Մօլա-Թաշը, Թիւ 16
Կ. ՊՈԼԻՍ

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ:

«ՏԱՃԱՐ»ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ Զարմայր Քանանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեթիկթաշ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمى كليسا ساسنده « داجار » غزنه مى مديرى پاپاس زارماير افندي

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐԾՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-

նորդ Տ. Արսէն Քննյ. Դերձակեան

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Քննյ. Դա-

բիկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-

ղոս Վրդ. Դաֆթանեան

ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեղին Քննյ Պողար-

եան

ԱՖԻՕՆ ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր

Ա. Քննյ. Տօնէլեան

ԲԱԲԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.

ԳԱՂԱՏԻՍ. — Առաջնորդ Տ Բարգէն Եպս.

Կիւլէսէրեան

ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Քննյ. Սար-

դիսեան

ԵՕՁՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.

Դիմաքսեան

ԵՐՋՆԿԱ. — Տ. Մեսրոպ Քննյ. Թորոսեան

ՁՄԻԻՆԻՍ. — Տ. Յարութիւն Քննյ. Տ.

Սարգսեան

ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Քննյ. Տ.

Դալուստեան

ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.

Սաառէթեան

ԿԻՐԱՍՈՆ. — Մարտի էֆ. Թոքատեան

ԿԻՐԱՍԻԼԺԻՆԷ. — Տ. Ներսէս Քննյ.

Նշանեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց' տարեկան 40 դրոս

Արսասանանի համար » 10 ֆրանք

Ռուսիո » 4 րուբլի

Ամերիկա » 2 օջաւ

Ձեռք կը ծախուի պրակը 40 ֆարս

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Քննյ. Վարժ-

պեան

ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան

ՆԻԿՈՄԻԴԻՍ. — Տ. Ոսկէ Քննյ. Պիպիեան

Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Քննյ.

Տառեան

ՌԻՇԱՔ. — Կարապետ էֆ. Քէհեան

ՊԱՆՏՐՄԱ. ՊԱԼԷՔԻՍԻՐ. — Առաջնորդ Տ.

Կարապետ Եպիսկ. Մազլըմեան

ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.

Եպիսկ. Կէօմրիւքեան

ՌՈՒՍՏՈՒՔ. — Տ. Մկրտիչ Քննյ. Մըրջ-

նիկեան

ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.

Վրդ. Ասլանեան

ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.

Օտապաշեան

ՍԵՐԱՍՏԻՍ. — Առաջն. Փոխանորդ Տ.

Թէօփիլէ Քննյ Օտապաշեան.

ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-

պետ Քննյ. Թուխմանեան

ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Քննյ. Տրէդ-

եան

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-

եան

ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Գէորգ Քննյ. Թէրզեան

ՓԱՐԻՋ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառնա-

պուհ Քննյ. Բիպարեան

ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.

ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Քննյ. Դերձակեան

ՖԻԷՋՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 21 ՄԱՅԻՍ 1911

ԹԻԻ 19

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐԵՔ ՏՕՆԵՐ

Երեք տօներ, երեք յիշատակութիւններ կը զուգադիպին շաբթուս, միացնելով մեր մտքին մէջ՝ լրումը Փրկչական նուիրական տնօրինութեանց, Աստուածամարդուն անհուն գթութեան զգացումը, եւ անոր գերագոյն պատուէրին՝ սիրոյ եւ հաւասարութեան կիրառումը մեր ազգային կեանքին մէջ:

Յիսուսի Հաւքարձումը ներշնչարան մըն է ազնիւ մտածումներու, ամէն անոնց որ խորհիլ գիտեն:

Ձիթենեաց լերան վրայ կատարուած իրողութիւնը, անսովոր, բացարձակապէս եզական՝ մարդկային կեանքին մէջ, հրաշալի երեւոյթ մըն էր, նոյն իոկ Առաքեալներուն համար, որ Յիսուսի փառաւոր յազթանակէն ետքն ալ, թէեւ խորապէս համոզուած յարուցեալ Քրիստոսին աստուածայնութեան, դարձեալ «պշուցեալ հայէին ընդ երկինս երթալոյ նորա»: Աստուածային վսեմ պաշտօնը կատարուած

էր, մարդուս փրկագործութեան մեծ խորհուրդը լրացած, աստուածային փառքը Յիսուսի հրաշափառ յարութիւնովը՝ յայտնուած, եւ մահը պարտութեան մասնուած: Ա՛լ պէտք չկար Քրիստոսի մարմնական ներկայութեան իր աշակերտներուն մէջ: Յորչափ աշխարհի մէջ էր Աստուածամարդը, առաքեալները շօշափելի կերպով իրենց մէջ ունենալով Վարդապետը, անոր պաշտպանութեանը ապակնած, չէին անդրադարձած հոգեկան ներքին ուժին որ անհրաժեշտ է ինքնավստահ քայլերով յառաջանալու համար կեանքի ճամբուն մէջ:

Բայց ահա՛ Ձիթենեաց լերան վրայ է Քրիստոս, տաանը մէկ հաւատարիմ աշակերտներովը շրջապատուած, որոնց տալէ ետքը իր վերջին պատուէրներն եւ օրհնութիւնները, գալնանային շքեղ օրուն մը մէջ՝ տարածուն ձեռքերով՝ երկրագունտէն կը վերանայ հոգեւոր տիեզերքի մայրաքաղաքը: Ա՛լ երկիրը չէր կրնար իր մէջ կրել աշխարհներու ոտեղծիչը: Տիեզերքի մեծագոյն օրէնքը՝ ձգողութեան ուժը՝ չէր կրնար աշխարհին կապած պահել

Ան որ օրէնքները հաստատողն էր, անոնցմէ անհունօրէն գեր ի վեր: Նիւթական արեւը երթարկուած կը մնայ այդ տիեզերալսն մեծ օրէնքին, մուրակային դրութեամբ մը շրջապատուած՝ գծելով որոշ, սահմանուած ծիր մը անհունին մէջ, ուրիշ գուրս չի կրնար ելնել. բայց երկնային Արեգակը, արդարութեան Արեգակը չէր կրնար պարփակուիլ նեղ, սահմանափակ ծիրի մը մէջ: Ուստի՝

Ել ի Քրովբես, եւ քոեաւ, սլացաւ նա ի քեւս հողմոց:

Վե՛ր կը խոյանայ Ան, զմեզ՝ մահկանացուներս ալ հրաւիրելով որ եթէ մեր մարմնով կառչած կը մնանք այս տառապանքի հովիտին, գոնէ մեր հոգիով, մեր մտածումով վե՛ր բարձրաննք. ստորաբարձ կիրքերէ, գնոճ հաշիւներէ, նեղ, անձուկ ըմբռնում. ներէ բարձր, թեւածենք մաքուր մըթ. հողորտի մը մէջ:

Հոգիի այդ բարձրութեան մէջ միայն կրնանք ասուհով ըլլալ Աստուծոյ հետ հաղորդակցութեան, զգեստուանոր կենդանարար Ս. Հոգիին ուժը, զօրաւոր անընդեւի Հաւատքը, որ ձկնորմները գիւցաղներ կը դարձնէ, որ աշխարհի մեծագոյն հանճարները կը խոնարհեցնէ համեստ մտքի եւ համեստ իմացականութիւններու առջեւ, որոնք կարող կ'ըլլան աշխարհներ լուսաւորելու հոր եւ սքանչելահրաշ Գառաւորներովը Յիսուսի՝ կրօնքին, խոնարհութեան, սիրոյ, գթութեան, գերազոյն արդարութեան եւ հաւասարութեան կրօնքին:

.*

Քրիստոնէական սիրոյ եւ գթութեան այդ իտէպը կ'առաջնորդէ զմեզ անդրադառնալու շաբթուան միւս տօնին, Ազգ. Հիւանդանոցի հիմնարկութեան տօնին, որ սերտիւ

կապուած է Համբարձման տօնին հետ: Այդ օրը մայրութեան հայ ժողովուրդը առիթ ունեցու հաւաքուելու Ազգիկ Տունը Ս. Փրկչեան մատուին մէջ, ուր Յիսուսի Համբարձման փառայեղ յիշատակին հետ, սրբազան քարոզիչը պարզեց անոր անսահման գթութեան վարդապետութիւնը, հրաւիրելով հաւատացեալները՝ հետեւելու անոր վսեմ օրինակին, կառնելութեան, մարդասիրութեան գործերով միախառնելու տառապեալները, հիւանդները, անկարները որոնք դատաւարուած են այդ գթութեան յարկին տակ:

Հոգիի բարձրութիւնն ու սրտի խոնարհութիւնը, հեռու հակասական երեւոյթներ ըլլալէ, միեւնոյն ազնիւ ձիրքին տարբեր արտայայտութիւններն են, որ պէտք է միմեան Քրիստոնէային վրայ: Առանց հոգիի այդ բարձրութեան մարդ չի կրնար ունենալ քրիստոնէական խոնարհութիւնն ու հեզութիւնը, գթութիւնը մանաւանդ որ իրեն նպատակ ունի տառապողները միախառնել, վշտալիքեալները սփոփել, իյնողները վեր բարձրացնել իրենց մակարդակէն, վեր՝ դէպի հոգեկան առողջութեան եւ արժանապատուութեան բարձունքները:

Քրիստոնէական այդ վսեմ զգացումներով տոգորուած, Հայոց մեծ հայրապետը՝ Ներսէս՝ տակաւին Դ. դարուն մէջ Հայաստանը կ'օժտէր բարեգործական հազարաւոր հաստատութիւններով, հիւանդանոցներով, ուրկանոցներով, անկեղանոցներով, կրթարաններով, ուր մարդկային արժանապատուութիւններ ձուլուեցան, ուր հոգիի բարձրացման, մտքի ու սրտի ազնուացման, նկարագրներու կազմութեան գործը սլաւ: Այդ զգացումը, որ չէ մնում դարերու ընթացքին մէջ, մշիչ ուժը եղաւ Պէգճեաններու

եւ Տատեաններու, Պալեաններու եւ Յակոբեաններու, Ունճեաններու եւ Կիւլպէնկեաններու, եւ անոնց ընկերակցող ու անոնց հետեւորդ ազնուասիրտ վեհօգի Հայերու՝ հիմնելու պահպանել պատուաբեր վիճակի մէջ, գթութեան բազմակողմանի յարկը որ Ազգին Տունն է, եւ մանրանկար մէկ խտացումը կարծես ազգին ցաւերուն, իրական մէկ խորհրդանշանը՝ անոր վիշտերուն եւ տառապանքներուն:

Եւ նմանութիւնը կատարեալ ըլլալու համար կարծես, Ազգ. այդ Հաս. տատութիւնն ալ՝ մեր ազգին ընդհ. կացութեան նման՝ լքուած վիճակ մ'ունի հիմա, առաւել քան երբէք: Կրթական ու բարեգործական հազարուամէկ կարօտութիւններու դարման տանելու հարկադրուած, մոռցած ենք կարծես այդ յարկը, որ հիւանդանոց մըն է, անկեւանոց, ծերանոց միանգամայն, եւ մանաւանդ որբանոց:

Ուր էր թէ Հինգշաբթիի հանդէսը առիթ մ'ըլլար մեր յիշողութեան մէջ արթնցնելու Ազգին Տան պէտքերը, որոնց գոհացումը, եւ այդ Տան բար. գաւաճ սէ կանոնաւոր վիճակի մէջ պահուիլը Ազգ. արժանապատուութեան խնդիր մը պէտք է նկատէինք:

Զարմանալի հակադրութեամբ մը, սակայն, ճիշդ այդ յարկին մէջ ու անոր հանդիսակաց պարտեզին մէջ կը տօնուի յառաջիկայ կիրակի արդարութեան եւ հաւատարմութեան սկզբունքին յաղթանակը, սր մեր մէջ կը խորհրդանշուի Ազգ. Սահակադրութեանը:

Ուրիշ մարդիկներ, մեծ իրենց լայնախոհութեամբ, իրենց հագիի ու մտքի բարձրութեամբ, Օտեաններ ու Ռուսիներաններ, Ն. Պալեաններ, Սէր. վիշէններ եւ հոյլը Ազգ. յառաջդիմութեան, մտքի լուսաւորութեան անձնուէր մշակներու, հաստատեցին սահ.

մանադրական սկզբունքը Հայոց մէջ:

Այդ սկզբունքը, յիսուն տարուան կեանքի մը մէջ իր կիրառութեամբ, որքան օգտակար կըցած է ըլլալ: Բոլորովին տարբեր խնդիր է այդ, եւ իր բաղդատաբար բացասական արդիւնքը վերագրելի է ժողովրդային կրթութեան յետամնաց վիճակին: Բայց եր. ջանիկ է այս ազգն որ կըցած է կէս դարու շրջան մը բոլորել սահմանադրական ներքին վարչութեամբ. հիմերը դրուած են ժողովրդային իրաւունքի, ժողովրդային ձայնի գերակշռութեան. սկզբունք որ համաձայն է հայ ժողովրդային եկեղեցւոյ հիմնական ոգւոյն:

Երեք տօներն ալ, ուրեմն, այլապէ՛ս նուիրական են մեզի, մեր Փրկչին Հմարտնունը, յանուն Ս. Փրկչին հիմնուած Ազգ. Հիւանդանոցին հիմնադրեալ տարեգարձը, եւ նոյն Հաս. տատութեան շրջափակին մէջ կատարուող տարեգարձի հանդէսը Ազգ. Սահակադրութեան: Անոնք կը յիշեցնեն մեզի նուիրական պարտականութիւններ ձգտելու դէպի բարձր մտածումներ, ապրելու բարոյական կեանքի մաքուր միջոցորտի մը մէջ, ամէն գոհ. հիկ մտածումներէ, ճղճիմ հաշիւներէ, ստորաքարշ կիրքերէ վեր ու բարձր: Անոնք կը սովորեցնեն մեզի գերադոյն Գթութեան մարմնացեալ Փրկչին տուած հիանալի դասը՝ կրեկցութեան սրտագին զգացումով մը վերաբերուելու բոլոր տառապանքներուն, վշտակողներուն, ֆիզիքապէս ու բարոյապէս հիւանդներուն եւ իյնողներուն հանդէպ, որոնք մեր եղբայրներն են, մեր արեւակիցները: Անոնք կը յիշեցնեն մեզի, վերջապէս, արդարութեան եւ հաւասարութեան սկզբունքները, մեր պարտականութիւնները ազգին հանդէպ եւ մեր իրաւունքները զոր պիտի կրնանք սպասել ազգէն:

Իցիւ, հոգեկան բարձր իտեալի մը ձգտումը, գթութեան զգացումը, եւ եւ արդարութեան եւ հաւասարութեան գաղափարականները իրենց որոշ տեղն ունենային մեր սրտին ու հոգիին մէջ, ճշմարիտ երջանկութիւն ձեռք բերելու համար այս աշխարհին եւ յաւիտեանականութեան ալ մէջ:

ԶԱՐՄԱՅՐ ԲԱՀԱՆԱՅ

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱԿՈԲ ՍՐՃԵՑԻ

Բ. (*)

Վենետիկի հետև Մխիթարեաններէն Շ. Գ. Զարգանէլեան իր «Մատենադարան հայկական թարգմանութեանց» անուն գործին մէջ քանի մ'էջեր նուիրած է Սրճեցոյ մատենադարանի աշխատասիրութիւններուն վրայ, միայն յիշատակելով հայերէնի թարգմանութեամբ 20-21 ճառերը Մատենադարանի ուսումնասիրութեան մ'աւելի՝ Յիշատակներու եւ կամ Ճառքներու միջոցաւ ծանօթ եղող ճառերուն մէկ ցանկն է զոր հաւաքած է հանդուցեալ Մխիթարեանի Անշուշտ այս ցանկը շատ թերի է, եթէ ընդունինք յիշատակագիրներուն սուտած տեղեկութիւնները Սրճի եպիսկոպոսին աշխատասիրութիւններուն քանակին նկատմամբ, եւ միանգամայն ընդունելով թէ, այս մէջ բերուած ցանկէն զատ զեռ անծանօթ կը մնան բազմաթիւ ճառեր ու ներբողանքներ, որոնք Սրճեցոյ բնիկին մտքին արտադրութիւններն են ու դեռ հայերէնի չթարգմանուած կը գտնուին լոկ Ասորական Ճառքներու մէջ, եւ կամ հայերէնի թարգմանութեան ալ վաղերու փոշոտ մատենադարաններուն մէջ փճացման դատապարտուած ըլլալով, չէ կրցած իր աչքին առջեւ ունենալ բանասէր Մխիթարեանը:

Սրճեցոյ մատենադարանի աշխատասիրութիւններուն ամբողջացման գործը թողլով աւելի հետաքնին եւ ճշմանաւ մտքերու, կը բաւականանանք միայն նկատողութեան առնելու այն գլուխները որոնք մեզի հասած են յիշատակարաններու եւ կամ օտար աղբիւրներու միջոցաւ (1):

(*) Ա. յօդուածը տես Յաւար Թիւ 15:

(1) Այս առթիւ կ'արժէ ուշադրութիւնը հրաւիրել ամէն անոնց որոնք հմուտ են Ասորի եւ Հատին լեզուներուն, որով շատ մը նոր ծանօթութիւններ պիտի գտնեն այս Ասորի Հօր կեանքին եւ գործերուն նկատմամբ:

Յիշատակուած ճառերուն առաջինն է Ղազարու Յարութիւնը ներբողող գրուած մը, «Սրբոյն Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի ասացեալ ի յարութիւն Ղազարու», ուր կը գրուած է Քրիստոսի գերագոյն զերը մարդկային ընկերութեան մէջ, աշխատարդ հրաշքեր կատարելով: Ճառը կը սկսի սա գեղեցիկ յատկաբանով. «Բաց զըթունս իմ խօսիլ վասն քո, Որդի Աստուծոյ, զի քեւ բարբառին ամենայն բանաւորք, փակեալ է ի մեղայ յերան մարդկան ի փառաբանութեանց քո» (1):

Ճառ մը Քրիստոսի խաչելութեան մասին, որով աշխուղման աւազակին զրախար հրաւիրուելու պարագան կը ներբողէ. «Յաւուր մեծի խաչելութեան տեսն մ'ըտ Յիսուսի Քրիստոսի եւ յաւազակն որ հրաւիրեցաւ ի զբախան եւ ի Սկրովբէն որ պահէր զճանապարհ՝ ծառոյն կենաց» Այս խորհրդաւոր պարագան զեղեցիկ կերպով դուրս ցայտեցնելու համար, մատենագիրը իր քնարին գիմած է բանաստեղծական թռիչքներ առնելով. «Անծանօթ ծնունդ ծոցոյ քոյ Հօր միածին, զարթո՛ւ՝ զքնարս իմ եւ փարթամաց ի պարգեւեաց քոյ զբանս իմ, պատմել զմեծութիւն փրկութեան քոյ»:

Էջմիածնի մատենադարանին (թիւ. 914) ձեռագրին մէջ տարբեր խորագրով մը կը գտնենք սոյն ճառը. «Երանելոյն Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի ասացեալ բան զարմանալի յաւազակն աշխուղման» Նոյն մատենադարանին (թիւ. 922) ձեռագիրն ալ ունի սոյն ճառը զարձեւալ տարբեր խորագրով. «... ի չարչարանս տեսն միայն Յիսուսի Քրիստոսի յիննբորդ ժամու. յաւազակն որ հրաւիրեցաւ ի զբախան, եւ ի Քերովբէն որ պահէր զճանապարհն» (2):

Ճառ մը Քրիստոսի փրկագործ յարութեան վրայ. «Ի սուրբ զատիկն եւ յարութեան վրայ»:

(1) Այս ճառը կը յիշատակուի նաեւ Ասեմանի Արեւելեան մատենադարանին մէջ (Bibl. Orient. հատ. Ա. էջ 22. հմտ. Մատնդր. հայկ. հին Պարզմ. էջ 574):

(2) Այս տարբեր խորագրները ենթադրել կուտան մէ միեւնոյն ճառը տարբեր գրիչներէ զարգանաւ կամ զրգաւորուած է:

թիւն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի» խորագրով, որուն մէջ մատենագիրը իր բոլոր խանդն ու աւիսը ծրարած է սա զեղեցիկ սկսուածքով. «Այսօր ուրախութիւն մեծ լի ընտրութեամբ զարհուրեցուցանէ զիս պատմել զբան մարգարէին որ ասէ: Այսօր է զոր արար տէր, եկայք ցնծացուք եւ ուրախ եղիցուք(1):»

Ճառ մը զարձեւալ «Ի յարութիւն տեառն եւ ի զինուորան» խորագրով. «Յարութիւն քս զարթոյցանէ զիս ճառել զինքէնէ: Դու տէր պարգեւեա ինձ ձայն որ գոչէր զզարթուցումն քո. եւ յաղագս մեծ գառու գինուորացն որ պահեցին զգերեզմանն քո:» Գրչաւոր Ճառքնտիր մը տարբեր խորագրով կը քնէ սոյն ճառը. «Ի թաղումն եւ ի յարութիւն տեառն մի. բոյ Յիսուսի Քրիստոսի եւ ի պահպանութիւն դասուց զինուորաց(2):»

Հ. Գ: Զարբանէլեան Քրիստոսի յարութեան վրայ երրորդ ճառ մին ալ մէջ կը բերէ, «Լուան Աննա եւ Կայիափա» խորագրով, առանց ընտրել յիշատակութեան. հաւանական է որ խորագիրն եւ տարբերութենէն յառաջ եկած ըլլայ այս շփոթութիւնը: (Հմտ. մատնագր. հայկ. հին թարգմ. էջ 574):

Ճառ մը «Ի Համարձումն տեառն» խորագրով եւ «Զարթիր քնարն իմ» յառաջաբանով(3):

Ճառ մը «Ի նոր կիրակէն եւ ի սուրբ առաքեալն Թովմաս», որուն մէջ պատմած է Թովմասի թերահաւատութիւնը եւ Յիսուսի ինքզինքը յայտնելու խորհրդաւոր պարագան սա բառերով «Յորժամ յարեալ հովիւն ի մեռելոց մեծաւ զօրութեամբ. սքանչելի նշանօք՝ այդ արար առաքելոյն հաստատել զնոսա» Սոյն ճառը կը յիշուի նաեւ Էջմիածնի մատենագրարանին (թիւ 914) գրչաւորին մէջ քիչ մը տարբեր խորագրով. «Ի նոր կիրակէն եւ ի թերահաւատութիւն Թովմայի առաքելոյն բան էքնաղ եւ զարմանալի(4):»

Ներբողեան մը «ասացեալ ի ննջումն սրբոյ Աստուածածնին եւ միշտ կուսին Մարեմայ» խորագրով, որուն մէջ Տիրամօր վերափոխման հրաշալի պարագաները նկարագրած է, «Որդի Աստուծոյ որ սիրով քով խոնարհեցար եւ իջիր յերկիր եւ զդեցար մարմին եւ մարդացար ի դասերէն Դաւթի»:

Ուրիշ ներբողեան մ'ալ գրի առած է Սրճեցի «Բան դրուատեաց ի Յովհաննէս Մկրտիչն եւ Կարապետն Քրիստոսի» վերահագրին տակ. որով նախակարապետին Յիսուսի մասին յայտնած հաւատքը կը դրուատէ սա յառաջաբանով. «Յիսուս լոյս փառաց որ զամենայն աիեզերս պայծառացոյց ծագումն յայնուրեքեան քո, յայտնեալ առ իս ի նշուլից չնորհաց քոց» (Հմտ. Աստուծոյ հատ. Ա. էջ 328): Ճառ մը «Վասն առաջին խորհրդոյն եւ ի վերայ նահապետաց եւ մարգարէից» խորագրով. որ կը սկսի սա բառերով. «Ի ծով խորհրդոց քոց, ահա իջանեմ ի վաճառ որդի Աստուծոյ. լե՛ր ինձ նաւահանգիստ եւ իսաղողութիւն մեծ: Ալիք ճառից քոց մի առ մի ձգես զիս. եւ ի յընթեռնուէն զնոսա ելանեմք ի բարձրութիւն Հօր քոյ:»

Ասոնցմէ զատ գրչաղիւնները մեզի հասուցած են նաեւ երեք ներբողեաններ՝ գրուած Անտիոքի վրայ՝ որով Սրճեցին կը նկարագրէ թէ ինչպէս Քրիստոսն էութիւնը առաջին անգամ մուտ գտաւ այդ քաղաքին մէջ Առաքեալներուն ձեռքով. եւ այս ներբողեաններուն առաջինն է «Յաղաքս Անտիոքայ քաղաքին թէ որպէ՞ս մտին առաքեալքն Պետրոս եւ Պաւղոս եւ եւ Յովհաննէս եւ աշակերտեցին զնոսա ի հաւատս Քրիստոսի» խորագրով գրուածը, եւ կը սկսի այսպէս, «Լուսով բոնիւ քոյ զամ առ քեզ որդի Աստուծոյ, առ ի տեսանել զճշմարիտ եւ զհրաշալի պայծառութիւնդ քոյ: Ստուգեա յիս բան վարդապետութեան. զի զարթուցեալ խոստովան լինիմ անուանոց քում սրբոյ անմահդ Աստուած:»

Երկրորդն է «Ճառ վասն Անտիոքայ ասացեալ» ուր իրարու հետ կը վիճաբանին Պետրոս եւ Պաւղոս. «Ասէ Պետրոս

(1) Տես Աստուծոյ հատ. Ա. էջ 322:

(2) Հմտ. (նոյն տեղ):

(3) Այս ճառը միայն Զարբանէլեան կը յիշուի:

(4) Տես «Արարատ» ամսագիր 1888 թիւ 5:

աշակերտ նորա իցեմ: Ասէ Պաւղոս. Ամե-
նայն աշակերտ զարուեստն ի վարդապե-
տէն ուսանի. եթէ աշակերտ ես նա-
զաւրացուցն, բայց կոյր մի եւ հաւատամբ
յԱստուած քոյ:»

Երրորդը անվաւեր է. բայց Աստեմանի
ունի (հմմտ. հատ. Ա. էջ 332). կարգ մը
գրչազիրք հետեւեալ խորագրով կը նշա-
նակեն այս ճառը «Յակոբայ Սրճոյ եպիս-
կոպոսի ասացեալ բան զարմանալի վասն
դարձի Անտիոքայ քաղաքի»

Խնայելով Տաճարի սուգ էջերուն, զանց
կ'ընենք յիշելու այն բոլոր ճառերն ու
ներբողեանները որոնք կամ թերի են եւ
կամ անվաւեր, եւ միայն կրնանք ըսել
թէ Վկայասէրի զպրոցը յաջողած է Ար-
ծաթի դարու վայելուչ լեզուով մը հայա-
ցնել Ասորի Հօր այս գեղեցկահիւս ճա-
ռերն ու ներբողեանները, որոնց մէջ ըն-
դելուզուած ոճի եւ գաղափարի ներդաշ-
նակումները զիրար կ'ամբողջացնեն:

Սրճեցոյ գործերը Եւրոպական լեզու-
ներու ալ թարգմանուած են Ասորական
բնագրէն. իր նամակներէն մէկը Յովհան-
նէս Սաղմոսերգուին (Jean Psalté) մէկ
երգին հետ Նաճրանի (Nadjran) կոտորա-
ծին առթիւ գրուած եւ Եդեսիոյ Պաղոս
եպիսկոպոսի(1) (510-532) ձեռքով գրչապ-
րուած է զոր պերմաներէնի թարգմանած
է Շրթթէր(2): Գ. ԳԱՊՊԷՆՃԵԱՆ

ՄԱՐԱԾ ԼԱՄՊԱՐԸ

Ասուցցիս՝ Բարգէն Եպիսկոպոսին

Իրկուն էր տխուր, գիշերն ալ եկած,
Լամպարին լոյսը արիւնէն տոգունած.
Շողիկ մ'իսկ ջուներ լուսնակն այն գիշեր.
Երազն աքքիս տակ ունէր սեւ յուշեր:

Ասուպ մ'իսկաւ վար. կայծերով երկար
Կապոյտին աչքէն, ինչ տխուր նկար.
Հիւժաւորին պէտ, որ կ'երազէ հող.
Երգող մ'ըլլայ ան եւ կամ հէք քերթող:

(1) Այս եպիսկոպոսը Քաղկեդոնի ժողովը մեր-
ժեւուն համար Յուստինոս կայսեր կողմէ Եդեսիայէն
աքսորուցեալ:

(2) Տես Հ. Տիւշէնի «Ինքնօրէն եկեղեցիներ»
անուն գործը. հմմտ. Տիւվալի «Hist. d'Edesse»-ը, Գլ.
ԺԱ.

Մայրիկը նստած վառարանին մօտ
Եր դիտէր ճակտիս ստուերը Թախծոտ.
Լամպարին աղօտ լոյսին տակ ինկած.

Ես կը խոկայի մայրիկն ալ կուլար
Երբ լամպարն հազիւ հեւքոտ կը պլպլար.
Փչեց ցուրտ հով մը ինկաւ վերջին կայծ:
ԳՊՐԵՎԱՆՔՅԻ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՂՆԵՐԷ

Մ Ա Ր Դ Ը

Բ.

Առանձնութիւն վայելելու համար
պէտք է դուրս գալ ոչ միայն մարդոց ըն-
կերութենէն, այլ նոյն իսկ սուսներու
նկրքին մասէն: Եթէ ես կը կարգամ, եթէ
կը գրեմ, ես առանձին չեմ, թէպէտ եւ
իմ մօտ ոչ ոք չըլլայ: Կուղէ՞ք մինակ
ըլլալ, աչքերնիդ վերցուցէ՛ք դէպի աստ-
ղերը: Այն ճառագայթներն որք այս երկ-
նային մարմիններէն կը թորին, պիտի
բարձրացնեն ձեր մարդկային ազգի որակը
ոամիկ եւ տափակ իրականութենէն: Կա-
րելի է կարծել որ թափանցկութիւնը
տրուեցաւ մթնոլորտին. որպէս զի մարդը
աստղերը տեսնելով ու գիտելով, վստօն
հետ չարունակական հաղորդակցութեան
մէջ գտնուի:

*. Մարդ ոչ միայն հացի պէտք ունի,
այլ նաեւ պէտք ունի արժանապատուու-
թեան, նա իր բնութեամբ իսկ արժանա-
պատուութիւն մ է:

*. Մենք չենք կրնար տեսնել մեր
դէմքը, մինչեւ որ զայն իր մէջ ցոլացնող
մարմին մը չ'ըլլին, այսպէս եւս որ էս գի-
մեր հոգին զինքն զգայ եւ զինքը ճանչնայ.
պէտք է որ ուրիշ հոգի մը անկից ստա-
ցած տպաւորութիւնն իրեն հաղորդէ:
Աւասիկ թէ ինչո՞ւ գրեթէ ամէն կերպ
չարեաց կը հանդուրժենք, քան թէ կ'ընտ-
րենք բացարձակ եւ մշտնջենական ա-
ռանձնութիւն մը: Աւասիկ թէ ինչո՞ւ կը
փախչինք հիւսնայի պարտէզներէն, սւր

ամեն փափաքելի բաներ ունէինք, ի բաց առեալ նմաններուն ընկերութիւնը:

*. Մարդ պէտք է որ իր անձին տը-
ջապետութեան վազէ, եւ պէտք է որ իր
գարգազումն իր յատուկ եւ մէկ հատիկ
գործն ըլլայ:

*. Բարձր զգացումներ, բուն սէր,
պարզ ճաշակներ, աստիք կը կազմեն
մարդը:

*. Ներքին ձայն մը հեղինակաբար կ'ա-
ղաղակէ ինձի. «Բո՛ւ իա՛նքն յառաջ վա-
րէ՛, ֆանա՛՛ ընտթեանդ յոռի մասերն
հպտակեցն՛ւ քու բարձր ընազդներուն
եւ լատգոյն եղի՛ր»:

*. Այն մարդը որ իր կեանքն ինքը կը
պատրաստէ, որ իր գործերուն ճշմարիտ
հայրը զինքը կը զգայ, որ նպատակ մը
ունի եւ զայն յառաջ կը վարէ յարատե-
ւութեամբ, միայն իր կամքին ճիգերէն օ-
ժանդակուելով, այն մարդը որ իւրաքան-
չիւր քայլափոխի դժուարութեանց հան-
գիսիով զանաւոր իրայ կը վանէ իր
հնարագիտութեամբ կամ իր կորովով, իր
համբերութեամբ կամ իր ոյժով, ասիկայ է
ճշմարիտ մարդը:

*. Այն մարդը որ ստանալիք չա՛նը
տեսնելով իսկ տարրութիւնը կը խորհի,
որ վտանգ մը տեսնելով հանդերձ իր
կեանքը կը զոհէ, այն մարդն է մարդ
կատարեալ:

*. Մարդը կը գործէ ինչպէս որ կը
սիրէ, եւ կը սիրէ ինչպէս որ կը մտածէ.
մտածումները կը կազմեն սիրտը եւ սիր-
տը կը կազմէ բարքը:

*. Անձին գաստիարակութեամբ եւ
կառավարութեամբ է որ մարդս մեծ
կ'ըլլայ:

*. Ուժեղ մարդը ան է որ իր անձին
կը յաղթանակէ:

*. Զիկայ մարդ մը որ իրաւունք ու-
նենայ մտրդիկն անգոռնելու:

*. Մարդուս համար ճշմարիտ դժբաղ-
դութիւնն այն է որ թերութեան մէջ կը
գտնուի, եւ պատճառ մը կը գտնէ զինքը
չքմեղացնելու համար:

*. Ես չհանդիպեցայ մարդու մը որ
սովորելիք բան մը չունենայի անկից:

*. Կուզէ՞ք ճանչնալ մարդ մը, անոր
մեծ պաշտօն մը տուէ՞ք:

*. Կ'ուզէ՞ք գիտնալ թէ ի՞նչ կ'արժէ
մարդ մը, լսեցէ՛ք զինքն իր յարաբերու-
թեանց մէջ իրեններուն հետ:

*. Զգուշացէ՛ք այն մարդէն որ ամէն
բան լաւ կը գտնէ, նաեւ այն մարդէն որ
ամէն բան յոռի կը գտնէ, եւ մանաւանդ
զգուշացէ՛ք այն մարդէն որ անտարբեր է
ամեն բանի:

*. Տիեզերքի գեղեցկագոյն արարկան
պարկեշտ մարդն է. կոռի միջոցին իր սո-
խին հետ ունեցած վարմունքին մէջ. սա-
կայն դեռ աւելի գեղեցիկն այն համեստ
մարդն է որ զայն կը մխիթարէ:


*. Ամենակատարեալ մարդը ան է սր
ամենաողտակարն է ուրիշներու:

*. Սրդար մարդը, պարկեշտ մարդը
ան է որ կը չափէ իր իրաւունքն իր պար-
տականութեան հետ:

*. Կը խանդաղատիմ պարկեշտ մար-
դու անուան: Աչքիս առջեւ կը ներկայա-
նայ մարդու մը ակնածելի պատկերն որ
աշխարհի վրայ բեռ չեղաւ, որուն սիրտը
երբէ՛ք անարդարութիւն չյղացաւ եւ
որուն ձեռքը երբէ՛ք զայն չգործադրեց,
որ ոչ միայն մեր նմաններուն գոյքը,
կեանքը, պատիւը յարգեց, այլ նաեւ անոնց
բարոյական կատարելագործման աշխատե-
ցաւ, որ իր խօսքը կատարող եղաւ, որ
իր բարեկամութեանց մէջ հաւատարիմ
եղաւ, որ անկեղծ եւ հաստատուն եղաւ
իր համոզմանց մէջ, ժամանակին փոխուե-
լով որ ամէն բան իր փոփոխմանց մէջ
կ'առնէ կը տանի. անիկայ հաւասարապէս
հեռի մնաց կամապաշտ յամառութենէ իր
սխալմանց մէջ. աւասիկ պարկեշտ մարդը:

Հաւաքեց է. ԿԱԶ

Քաղեց ԽԱԶԻՍԱՐ



ՕՐՈՒՍԵ ՔԻՐԳԸ

ՈՒՐԱ ՍՐ ՏՈՒ

Պատմա-քանասիրական աշխարհին մեզ մեծ հետաքրքրութիւն շարժեց Գեորգ-Մեսրոպի Ուրաւու կամ Հայաստանի նախաքրքրութիւնը եւ իրենց հաղափարութիւնը գործը, հիմնուած պատմական նորագոյն հետազոտութիւններու վրայ : Երիտասարդ հեղինակը, հակառակ իր տրամադրութեան տակ գտնուած խիստ սահմանափակ աղբիւրներուն, կրցած է ներկայանալի հատոր մը հրապարակ հանել, իր տեսակին մէջ միակ հայերէն տարողական գործը՝ որոպի գիտենք Հայաստանի նախաքրքրութիւնը : վրայ, Թէեւ նոյն իսկ Հայերու կողմէ գրուած ֆրանսերէն ուղագրաւ հատորներ կան, ինչպէս կան այս կամ այն շրջանին վրայ Միխիթարեաններու կողմէ հեղինակուած կամ Թարգմանուած լուրջ գործեր : Շահեկան պիտի ըլլար ներկայացնել այս գործին մէկ քանի կարեւորագոյն հատուածները՝ նախափայտու գրին, երկրագործութեան, ռազմական արուեստին, ընտանեկան կեանքին, եւն. վրայ : Բայց, առ այժմ, սպասելով ձեռնհաս աշխատակցի մը կողմէ խոստացուած գրախօսականին, կը ներկայացնենք գրքին եզրակացութիւնը, որ մերձաւոր գաղափար մը կուտայ գործին վրայ :

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Կ Ն

Ահնարկ մը դէպ ի ետ :

Հայաստանի բուն պատմական շրջանէն շատ դարեր առաջ, այլազան ժողովուրդներ եկած բնակած են անոր սարերուն վրայ, անոր դաշտերուն մէջ : Անոնց լեզուն հայերէն չէ եղած, անոնց անունները հայկական չեն : Անոնց նկարագիրը երկրին բնական ազդեցութեան մէկ ծնունդն է : Խաշնարած հովիւներ են անոնք լեռներու վրայ, երկրագործներ՝ հովիտներու մէջ :

Այդ ժողովուրդները լազաթիւ աւանդներով կը ճանչցուին. Ուրարտացիներ, Նախիջիւններ, Գիլգամացիներ, Խուրուշիւացիներ, Բիախնացիներ, Մաննացիներ եւն. : Բայց զրեթէ ամէնքն ալ միեւնոյն մայր ցեղին երանգաւորումներն են, քոյր ժողովուրդներ : Ընդհանուր անունով կը կոչուին անոնք Սպիտակ այլաքներ, Տուրանական ժողովուրդներ :

Քոյր ազգեր են անոնք Կովկասի եւ առաջաւոր Ասիայի գրեթէ բոլոր ժողովուրդներուն, Վրաց, Քետացուց, Թաթարներուն, Մուշքուներուն, Խաղթներուն, Քաղդէայոց ինչպէս եւ Տուրանի բնակիչներուն, եւ իջին Ասիայի Մոնկոլեան հնագոյն ցեղերուն :

Նախաւոր դարերու բարձրագոյն քաղաքակրթութիւնը այս տուրանական ցեղերու ծնունդն է : Շատ կանուխէն բարձրացած են անոնք իրենց շրջապատի մարդկային ստոր մակարդակէն վեր. հնարած են գիր եւ գրականութիւն, արուեստներ ու գիտութիւններ :

Հայաստանի այդ Տուրանական բնիկներն ալ կրցած են հասնիլ բաւական բարձր ու ներկայանալի քաղաքակրթութեան մը : Քաղաքակրթական տեսակէտով անոնց ներկայացուցիչ ժողովուրդները կ'ըլլան Նախիջիք եւ մանաւանդ Ուրարտացիք, որոնք ունին իրենց պատմութիւնը, չքեղ՝ փաստեր :

Անոնց աշխարհակալները, իրենց յանդուր ջաշուրեալ եւ բուռն պայքարներով, իրենց մականին տակ կը խոնարհեցնեն հարեւան բոլոր մանր ցեղերը, կ'անցնին իրենց հայրենի սահմաններէն ալ անդին, կ'արշաւեն ամէն ուղղութեամբ, կը չափուին Ասորեստանի նման ահարկութիւնամբի մը բանակներուն հետ : Եւ կուգայ պահ մը, երբ բովանդակ Առաջաւոր Ասիայի ցեղերուն ու թագաւորութիւններուն ղեկավար ոյժը կը դաւնան :

Ասորեստանի բարբերէն շատ կ'ազդուին իրենց աշխարհակալի ձգտումներուն, իշխանական ներքին կեանքին, կը բռնքին ու ճարտարարուեստներուն մէջ, բայց կը պահե՛ն հաւ իրենց ինքնութիւնը, կը ներկայանան ինքնատիպ իրենց քաղաքականութեամբ, իրենց լեռնական բիրտ ոյժով եւ իրենց կրօնի հիմնական սարքերով :

Տուրանական բոլոր ժողովուրդներուն նման, կը պաշտեն անոնք աւելական աստուածներ՝ Խաղթներ, որոնք յաղթական իշխաններու հետ մէկտեղ կը զօրանան :

կը մեծնան, կը տիեզերականան ու կ'իշխեն ուրիշ տեղական մրցակից աստուածներու հետ :

Ամէն գաւառ, ամէն քաղաք եւ նոյն իսկ ամէն աւան առանձին արքայիկ մը ունի անոնց մօտ : Աւաստականութիւնը (féodalité) դրոշմուած է անոր բարքերուն խորը : Հայ նախարարութիւններ այդ աւաստական կազմին միացորդներն են : Իրենց ճարտարարուեստները թէպէտ կը ցուցադրեն երբեմն ասորեստանեան կնիքը, բայց ունին նաեւ իրենց ինքնատիպ կողմերը : Լեռներու կողերուն վրայ փորուած ջրմուղները, ցից քարաժայռներու մէջ փորուած ամուր բերդերը ուրարտական են, լեռնաբնակ ժողովուրդի ծնունդ :

Այդ ժողովուրդին իր աւատական կազմով ու կրօնքով, իր պայքարներով ու շինութիւններով, երկար դարեր ապրելէ յետոյ, տեղի կուտայ նոր ցեղերու, նոր ազգերու առջեւ, կը խառնուի անոնց հետ, կը յուծուի, կը ձուլուի անոնց մէջ ու կը յայտնուի նոր անունով, նոր պատմութեամբ :

Պէտք չէ զարմանալ երբ ըսենք ճշմարտազանցութիւնով մը (paradoxe) թէ Հայը Հայաստանի այդ աուրանական ցեղերուն արիւնը կը կրէ այժմ, անոնց սակորէն է, անոնց բարքերն ունի : Արիական Հայերը կրցած են իրենց լեզուն առլ տուրանական այդ ցեղերուն, բայց իրենք ալ խառնուած են անոնց արիւնով : Իրենց կազմախօսութիւնը շատ քան կը ցուցնէ ուրարտական, իրենց բարքերը շատ լաւ կը ցուցնեն տուրանական : Հայուն ֆիզիքական կազմը, ինչպէս ընկերային բարքերը, աւատական՝ նախարարական գրութիւն՝ իր բոլոր հետեւանքներով, պահպանողականութիւն, տուրանական ժառանգութիւն են :

Հետեւաբար մեղի համար կրկնապէս շահեկան պէտք է ըլլայ Հայաստանի այդ նախաքնիկներու պատմութիւնն ու քաղաքակրթութիւնը, որ արիական Հայաստանի պատմութեան ու քաղաքակրթութեան ոսկի շղթային աստիճանն օղակները պէտք է նկատուին նոյնիսկ :

Առանց Ուրարտական ժողովուրդներու պատմութեան չի կրնար մեկնուիլ Հայ Պատմութիւնը : Անոնց պատմութիւնը Հայաստանի մթաստուեր սարերուն վրայ լուսաւոր առող մըն է, որ հայ ժողովուրդին պատմական արշալոյսը կ'ոսկեզօծէ :

ԳԷՂՐԳ-ՄԵՍՐՈՊ

ՍՊԵՐԻ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆԷՐԸ

Սպերի բոլոր յիշատակարանները պըրպտած եւ գրեթէ ինչ որ մեր հոն երթալէն առաջ վերցուած էր այլոց կողմէն, անոնք միայն աչքէս վրիպեցան բնականաբար, զոր օրինակ ձեռագիր կանոնագիր մը՝ զոր կը հաւատարմի թէ Վարիզոնց գիւղէն տարած է Օրմանեան Արքեպիսկոպոս, եւ կարգ մը հին ձեռագրեր զորս Գաբրիէլ քահանայ ոմն վաճառած է Կարնոյ գիւղերը :

Այդ բոլոր յիշատակարանները կը հաստատեն Ս. Յովհաննու վանքին 1500 տարուան գոյութիւնը, մինչ մրտ վանքերը շարաթացաւ են, ինչպէս Պղնձէ վանքը զոր կը գտնենք Բաբերդի խայք գիւղի Տ. Տոճատ քահանայի մօտ գրանուած յիշատակարանի մը մէջ միայն, ուր կ'ըսուի թէ միաբաններ ալ ունէր Պղնձէ վանքը կը թուի ըլլալ Դիզանց գիւղի սահմանին մէջ աւերակ վայրը, որուն բազմաթիւ հողերը միացուած են այժմ Ս. Յովհաննու հողերուն, եւ այս վերջինը կը ստանայ այդ հողերուն տարեկան վարձքը :

Ս. Յովհաննէս ոչ միայն Հայերուն այլ եւ թուրքերուն սիրելի ուխտավայրն է, եւ այս վերջին տարրը զայն կ'անուանէ Հիւսէիճ sskk, չեմ գիտեր ինչ նպատակով ծաւ է ըսել թէ Կարնոյ վիճակին ետեւարկուած այս թեմը՝ Սպերը, իւր 17 հայաբնակ գիւղերով (ամենքը 460 առն) չէ կարող մատակարարել իւր վանքը ըստ արժանւոյն, իսկ Կարնոյ Առաջնորդները երբեք հոգ չեն տարած անոր նկատմամբ, ուր շատ գիւրջն էր եւ է կրթարան մը բանալ :

Հանգուցեալ Յարութիւն պատրիարք

Վեհապետան հարձեւմ ընսւ չէ՝ այցելած Սպիր՝ երբ կարնոյ առաջնորդ էր. աւոր յաջորդները թէեւ քանիցս այցելած են, բայց հոգ չեն տարած կրթարան բանալու հոն: Տ. Սմբատ եպիսկոպոս մտադիր է այդ բանն ընելու, կը շնորհաւորենք ղինքը, եւ յաջողութիւն կը մաղթենք: Մենք արդէն գրած ենք իրեն, նոյն մեհաստանին տարեկան հասոյթներու մասին. փափաքելի է որ Միացեալ ընկերութիւնը անգամ մը ոտքը դնէ այդ սրբավայրը, եւ շուտ պիտի համոզուի թէ իր ապագային յարմար գետին մըն է ան:

Իցիւ, լսելի լինէր մեր այս հակիրճ յայտարարութիւնը, եւ Սպիրի սպագայ սերնային համար կրթական որբանի յարմար այդ հինաւուրջ մեհաստանը լուսոյ տոթաւը հանդիսանար հայ մարերու:

Մ. ՍԱՆՈՍԵԱՆ

Բաքերդ

ԺԻՐՎԱՆՁԱՏԷ

Ծ Ի

ԻՐ ՅՈՐԵԼԵԱՆԸ

Ռուսահայերը այս շաբթու կը տօնեն գրական վաստակաւորի մը՝ Շիրվանգատէի երեսնամեայ յորելեանը: Իբրեւ վիպագիր եւ թատերագիր, Յօրելեարը նշանակալից տեղ մը գրաւած է Ռուսահայ տաղանդաւոր գրողներու փաղանգին մէջ: Վիպագիր մը եղած է ան գերազանցօրէն, բառին եւրոպական իմաստով, տալով ծառագարը (վերջերս Արշակ Զօպանեանի կողմէ քրանսերէնի թարգմանուած). Դաւթ, Արդիսդը, եւ վիպային ուրիշ շատ կարեւոր գործեր, որոնց մէջ ջանացած է թափանցել իր հերոսներու հոգիին խորքը, վերլուծել հայ ընտանեկան կեանքի կազմալուծման պատճառները, ուսումնասիրել այդ կեանքը իր ամէն կողմերով, ճարտար վերահաստի նշգրտով երեւան հանել հայ կեանքի ամէնէն շարաւալից կողմերը, պարզել իր հերոսներու հոգին՝ իր բոլոր ծաւրերով: Բնածին տաղանդով մը, — որ

աւելի համաշխարհային պիտի դառնար՝ եթէ առիթն ունեցած ըլլար օժտուելու աւելի բարձր կանոնաւոր կրթութիւնով մը —, իր վէպերուն մէջ Շիրվանգատէ կրցած է հետաքրքրել ընթերցողները՝ իր հերոսներու կեանքով, մասնակից ընել անոնց վիշտերուն եւ ուրախութեանց, եւ առթել խորունկ յուզում մը՝ ընկերային ցաւերու եւ նախապաշարունակներու ի տես, որոնց կը զոհուի հայ ընտանեկան կեանքի անդորրութիւնը:

Իր բարոյական սկզբունքներուն, եւ պաշտպանած քեզերուն համամիտ գտնուի թէ ոչ, մարդ կը հարկադրուի խոստովանիլ անոր վիպագրի արժանիքը, եւ բացարձակ անկեղծութիւնը:

Ինչպէս ռուսահայ գրականութիւնը գրեթէ պմրողջութեամբ, Շիրվանգատէ անծանօթ մնացած էր Թրքահայոց ստուար մեծամասնութեան, Համիտի երեսնամեայ բռնակալութեան սալսալի օրերուն: Աղատութենէն ետքը միայն Թրքահայ ժողովուրդը ճանչցաւ ղինքը, մասնաւորապէս իր թատերական գործերովը՝ Պատուի համար, Եզինե, եւ, որոնք Աբէլեան Արմէնեան թատերախումբին միջոցաւ հմայիչ ազդեցութիւն մը գործեցին հասարակութեան վրայ:

Յօրելեանի Հանդէսէն անջատաբար, Կովկասահայերը զանազան քաղաքներու մէջ գեղեցիկ հանդէսներ կազմակերպած են ի պատիւ մեծատաղանդ վիպագրին, հասոյթը յատկացնելով Յօրելեանին: Ատկէ զատ, Թիֆլիզի մէջ հրատարակուած է գրական-քննադատական ըստուար հատոր մը, Շիրվանգատէի կեանքին ու գործերուն ուսումնասիրութեանը նուիրուած՝ Սիմէոն Յակովբեանի կողմէ: Ուրիշ հատորով մը՝ Դեղարուեստի հրատարակութեամբ, Արսէն Տէրտէրեան կը ներկայացնէ Շիրվանգատէն՝ Հայ ընտանիքի եւ ինքնիշխանի վիպասանը:

Թրքահայերը, դեռ անվարժ այս տեսակ հանդիսութիւններու, ու զիրենք տաքնապէցնող մտահոգութեանց ենթակայ, գծապատարար չեն կրցած նշանակելի մասնակցութիւն վճարելու այս Բա-

բեկեանին Այս պակասը լեցնելու համար, Թրքահայ գրողներ՝ նախաձեռնութեամբ մեծատաղանդ գրագէտ Տիգրան Կաթա-րականի, ձեռնարկած են հրատարակելու ստուար հատոր մը՝ Ռուսահայ բազմա-վաստակ վարպետին անուանը նուիրուած, իբրեւ մեծարանքի արժանաւոր ցոյց մը: Այդ հատորին մէջ, որուն հրատարակու-թեան հոգն ստանձնած է Պ. Պալենց գրատունը, և տպագրութիւնը վստահ-ուած՝ Օ. Արզուման տպարանին, Շիրվան-զատէ կ'ուսումնասիրուի իր գրեթէ բոլոր գործերուն մէջ: Թրքահայ գրականութեան ամէնէն հոյակապ ներկայացուցիչները՝ Արշակ Զօպանեան, Տիգրան Կաթարական, Արտաշէն Յարութիւնեան, Հրանդ, Գառ-նիկ Ֆնտգլեան, Զապէլ Էսաեան, Գ. Զօհրապ, Չիֆթէ Սարաֆ, Վահան Թէ-քեան, Տիրան Զրաքեան, Սուրէն Պար-թեան, Յովհ. Սէթեան, Վահան Մա-լեգեան, Եր. Սրմաքէշիանլեան, Եր. Օտ-եան, Արամ Անտօնեան, Միքայէլ Կիւր-ճեան, Գր. Մալխաս իրենց հմայիչ և հիւթեղ գրութիւններով ուսումնասիրած են Ռուսահայ վարպետը՝ իր կեանքին ու գործերուն բոլոր փուլերուն մէջ: Հատորը կը բացուի նոյն ինքն Շիրվանզատէի մէկ նախախօսով, ուղղուած գործին նախաձեռ-նարկ գրագէտին՝ Տ. Կաթարականի: Այդ նամակին մէջ ռուսահայ գրագէտը, շատ համեստ գնահատութիւնով մը իր գործին վրայ, երախտագիտութիւն կը յայտնէ որ Թրքահայուն կապանքները խորտակուելէ ետքը, իրեն՝ Շիրվանզատէի կը վիճակի միջնորդ ըլլալ փոխադարձ բարեկամու-թեան արեւմտահայ եւ արեւելահայ մեջ: Լորտախանների մէջ:

Մենք պիտի կրնանք ըսել թէ իրմէ լաւագոյն միջնորդ մը գուցէ կարելի չպիտի ըլլար գտնել այդ բարեկամու-թեան:

Մեր ջերմ շնորհաւորութիւններուն հետ մեծատաղանդ գրողին, պիտի փափա-քէինք որ իրապէս մշակուէր այդ բարե-կամութիւնը, որու գոյացման և առաւել ևս ամրապնդման համար անհրաժեշտ է որ սահմանափակուին այս և այն կողմե-

րու գրողներն և անոնց գործերը լռեա-գոյն ևս ծանօթացուէին մէկ մէկու:

Տաճար իր գրական բաժնի էջերը լայնօրէն կը տրամադրէ, այդ ծանօթաց-ման նուիրուած լուրջ ուսումնասիրութիւն-ներու և գրական հատուածներու առջև:

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ՄԻՌԻԹԵԱՆ

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

Կիրակի օրը Բերայի արհեստանոցին մէջ տեղի ունեցաւ Հայկական Բարեգոր-ծական ընկերութեան Պոլսոյ մասնաճիւղին տարեկան նիստը: Ամէն դասակարգէ սակաւաթիւ (անձրեւի պատճառաւ) բայց ընտրեալ խումբ մը ներկայ էր՝ եկեղե-ցական, աշխարհական, վաճառական, ար-հեստաւոր, ուսուցիչ, խմբագիր, Հայ-հոթ. մէական և Հայ-բողոքական ևն.: Վսեմ. Գարրիէլ էֆ. Նորատունկեան, որ կ'ատե-նապետէր, նիստը բացաւ բարի գալուստի խօսքերով, որմէ յետոյ Սեբաստիոյ եռան-դուն երեսփոխանը՝ Տ. Բ. Տաղաւարեան էֆ. տեղեկութիւններ տուաւ Միութեան ընդհանուր վիճակին վրայ, որ տարուէ տարի աւելի սրտապնդող եւ յուսադրիչ կը դառնայ: Տօքդորը շարեց մանրամասն թուանշաններ այդ վիճակին վրայ, որոնք ծանօթ են ընթերցողներուն. յիշենք միայն որ 1911 յունվար 1ին Միութեան վիճակն էր դրամագլուխ, նպաստ, նուէր, կտակ ևն. 23,700 ոսկի, անդամոց ընդհ. թիւն էր 3917 և մասնաճիւղերու թիւը բարձրացած էր 61ի: Շատ կարեւոր պարագայ մ'է որ մինչ անցեալ շրջանին Միութիւնը մեծագոյն նպաստը տուած է իբրեւ հացագին և կարօտելոց դրամ, վերջին ութ ամսուան մէջ նպաստը փոքր քանակութեան մը կը հասնի, և դրամին կէսէն աւելին տրուած է կրթական պէտ-քի համար: Տաղաւարեան էֆ. ծանոյց թէ առ այժմ գաւառներու մէջ վարժարան-ներ պիտի բացուին, իսկ վարժապետանոց մը ի վան, որուն շուրջ յարուցուած խըն-դիրները եթէ չդադրին բոլորովին, նոյն

վարժապետանոցը պիտի հաստատուի այլուր, որովհետեւ Միութիւնը կուսակցական վեճերու առիթ չուզեր տալ:

Գալով Պոլսոյ մասնաճիւղին, անցեալ տարի 47 ընկերներով կողմնաձեռն էր, այս տարի 351 բաժանորդ ունի: Նուիրատուութենէ 473 ոսկի, մտից տուրքէ 1774 ուկէս, և ամսավճարէ 659 ուկէս, համագումար 2307 ոսկի գոյացած է, որուն համար ամսական հազիւ 9 ոսկի զիւանական և այլ ծախք եղած է: Տաղաւարեան էֆ. յիշեց թէ Պոլսոյ նման քաղաքի մը մէջ ուր մօտաւորապէս 200,000 Հայ կայ, բաժանորդներու թիւը շատ քիչ է, ուստի հրապարակախօսութիւններով ևն. պիտի աշխատուի Միութեան օգտակարութիւնը պարզել: Միութեան օժանդակ մասնախումբ մը կազմել կ'աշխատուի, և խորհուրդ կայ տիկնանց յանձնաժողով մ'ալ կազմելու: Ի վերջոյ բանախօսը կոչուած ըրաւ որ ամէն Հայ իր շրջանակին մէջ աշխատի Միութեան նորանոր բաժանորդներ գտնելու:

Յետոյ խօսեցաւ Վսեմ. Ատենապետը, իրեն յատուկ գրաւիչ ոճով. յիշեց թէ Միութեան դրամագլուխը 25,000 ոսկիի մօտեցած է արդէն, և յոյս կայ որ օր մը 100,000ի յանգի: Ուստի անցեալ տարի Բարիզ Վսեմ, Պօղոս Նուպար և Եագուպ Արթին փաշաներու հետ կարեւոր խորհրդակցութիւններ ունեցած է Միութեան ապագային վրայ: «Եառաջիկայ տարի, ըսաւ, պիտի կրնամ հաղորդել Ձեզ թէ Անգլ. դրամատուն մը ապահով պայմաններու մէջ կը ստանձնէ պահպանութիւնը մեր դրամագլուխին. ապագայ ո և է պատահականութենէ փրկելու համար:» Նորատունկեան էֆ. բացատրեց թէ Միութիւնը իր օգտակարութիւնը պիտի ունենայ զըխաւորաբար դաւառի Հայութեան համար որտեղ աւելի է թշուառութիւնը, և թէ աղքատ պէտք ունի հաւասարապէս թէ՛ ուսման և թէ՛ տնտեսական միջոցներու բարելաւման: «Վսեմ. Պօղոս փաշա Նուպար հայութեան ճշմարիտ տիպար մ'է, և այս գործին նուիրուած է ոչ թէ երեւալու համար, ինչպէս կ'ըսեն սմանք, այլ

կատարեալ համոզումով և անձնուիրութեամբ:» Բանախօսը պէտքն զգացուց որ ամէն ոք նոյն համոզումով եւ անձնուիրութեամբ հետեւի այս գործին, որուն ապագան փայլուն պիտի ըլլայ ամէն կերպով: Յետոյ հրաւիրեց ներկաները՝ իրենց առաջարկները կամ թելադրութիւնները ներկայացնել, յոգուտ Միութեան: Տք. Մութաֆեան էֆ. պէտքը զգացուց հրապարակախօսութեանց, լրագր. հրատարակութեանց և ժողովրդեան այլ և այլ դասակարգերէ խառն յանձնաժողովներու կազմութեան, բաժանորդագրութիւնն ընդհանրացնելու համար: Գ. Շահպազ էֆ. առաջարկեց պարտք դնել ամէն անդամի վրայ, որ իր կարգին մէկ կամ երկու նոր բաժանորդ գտնէ, իսկ Տ. Արփիար պարգեւաւոր վիճակահանութեան մը առաջարկը բերաւ: Այս թելադրութիւնները խորհրդակցութեան առարկայ պիտի ընէ վարչական Խորհուրդը: Ամէնէն վերջը Տ. Հմայեակ Արքեպ. որ կը նախագահէր, նիստը փակեց շնորհակալութեան խօսքերով և բտրեմաղթութիւններով: Նորատունկեան էֆ. ծափահարութեանց մէջ յայտարարեց թէ յաջորդ տարի պիտի միանան լաւագոյն յաջողութիւններու շուրջը, և հրաւիրեց ներկաները՝ շրաք. դանի մը շուրջը, զոր պատրաստած էին Միութեան անդամները՝ իրենց անձնական ծախքով: Նորատունկեան էֆ. բաժակ առաջարկեց Վսեմ. Պօղոս փաշա Նուպարի կենաց որ կեցցէներով ընդունուեցաւ: Ա. Հիւրմիւզ էֆ. նոյնպէս Վ. Պոլսոյ մասնաճիւղին նախագահ Գ. Նորատունկեան էֆ. ի կենացը, իսկ Գր. Ծ. Վ. Պալաքեան՝ Հայ-հոռմէական և Հայ-բողոքական ազգայնոց կենացը: Այս օրն անցած էր, երբ հրաւիրեալները կը մեկնէին, տարուէ տարի երեւան եկած արդիւնքէն գոհ և յուսալից:

* * *

Այս առթիւ հաճութիւնով կը հրատարակենք Բարեգ. Միութեան կեդրոնէն ուղղուած հետեւեալ հրահրը, որ այս շաբթու. հասաւ. մեզ ի պատասխան այդ հրահրին, արդէն սկսած ենք

Ֆանառի ներկայ շրջանի Ա. Թիւէն ղրկել նորոգ-
հաստատեալ գրադարանին. փափաքելի էր որ մեր
բոլոր հրատարակիչներն եւ բարեխելները փու-
ճային իրենց կարելին ընել՝ գոհացում տալու
համար յայտնուած ազնիւ, բաղձնեքին.

Տիար,

Հայկական Ընդհ. Միութեան բաղմա-
դիմի նպատակին մէջ գլխաւոր տեղ մը
կը գրաւէ միտքի մշակութեան բաժինը:
Այս ընկերութիւնը իր հիմնադրութենէն
ի վեր այդ ուղղութեամբ աշխատեցաւ,
եւ ինչպէս արդէն իր վերջին տեղեկա-
գրէն կ'երեւայ՝ այժմ իր գլխաւոր ուշա-
դրութիւնը դարձուցած է կրթական գոր-
ծին:

Բայց այս գործունէութեան մէջ պա-
կաս մը կար, զոր կ'ըզր. Վարչ. Ժողովը
վերջերս փափաքեցաւ լրացնել՝ հիմնելով
իր Կեդրոնատեղւոյն մէջ «Կեդրոնական
Գրադարան» մը: Այս հաստատութեան
նպատակը պիտի ըլլայ Հայ ազգին ու
աշխարհին վրայ խօսող ձեռագիր ու տպա-
գիր ամեն լեզուէ հեղինակութիւններ եւ
հայ կրթութեան ծառայող ամենազգի
դպրոցական դասագիրքեր հաւաքել, եւ
ասոնց կրկին օրինակները յատկացնել
քննադատութիւն կարգու Մատենադարանե-
րուն եւ Ընթերցատուններուն:

Այսպիսի առաջադրութեան մը օգտա-
կարութիւնը վեր հանելու պէտք չենք
զգար, եւ տարակոյս չունինք որ մասնա-
ւորապէս Հայութեան մտաւորական դա-
սակարգը մեզի պիտի չի զլանայ իր ան-
վերապահ օժանդակութիւնը այս ձեռնար-
կին համար:

Այդ յոյսով՝ սրտագին կոչում կ'ընենք
ազգային հեղինակներուն, ուսուցիչներուն,
խմբագիրներուն, հրատարակիչներուն,
գրավաճառներուն, եւ առ հասարակ բո-
լոր կրթասէր անձերուն, խնդրելով որ
ջանան ճոխացնել Միութեան Գրադարանը
իրենց նուէրներով, որով ոչ միայն սա-
տարած պիտի ըլլան հայ միտքի արտադ-
րոյթներուն եւ հայ կեանքի տարեգրու-
թեանց կազմաւոր կեդրոնացումին, այլ եւ
գաւառային գրադարաններու տնուղղակի
նպաստաւորումին:

Չուղեյով Միութեան անուակին վրայ
ընել ըլլալ՝ ժողովրդական զոհողութիւն-
ներով է որ պիտի աշխատինք արգիւնա-
ւորութիւն մը ապահովել Կեդրոնական
Գրադարանին. հետեւաբար՝ սիրով պիտի
սրձանագրենք ամէնէն համեստ նուէրներն
անգամ:

Խորին յարգանք՝

Հ. Բ. Ը. Մ. Կեդրոնական Գրադարանի

Գրադարանագետ

Կ. ՇԷՐԻՏՃԵԱՆ ՊԵՅ

Գահիրէ, 10 Մայիս 1911

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՂՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Համագումար Ժողովն անցեալ եչ. որ
նիստ գումարեց, պատրաստելու համար
կրօն. Ժողովոյ անդամոց եռապատիկ
ցանկը: Այդ գումարումը նշանակալից ե-
ղաւ, սա տեսակէտով որ ողջմտութիւնը
կըցաւ լսելի ընել իր ձայնը, եւ Ժողովին
ստուար մեծամասնութիւնը զգուշացաւ
քուէ տալէ այնպիսի եկեղեցականներու,
որոնք խնդրոյ աւարկայ եղած են, որով
պատրաստուած 42 անուններու ցանկը
առանց առարկութեան ընդունուեցաւ Ազգ.
Ժողովոյ կողմէ: Բայց առիթը չենք փախ-
ցնել կրկնելու թէ հնար եղածին չափ
չուտով անհրաժեշտ է քննել ամբաստա-
նութիւնները, եւ նպաստաւոր կրօն ան-
նպաստ ո եւ է վճիռ պէտք է յ' ու թացուի:
Ազատութեան ներկայ շրջանին մէջ ար-
դարութեան գործադրութեան այսքան
յապաղումը նախատինք մ'է, զոր ազգա-
յին ո եւ է Մարմին պէտք չէ ընդունի
քնաւ:

Յաջորդ օրը, ուրբաթ, Ազգ. Ժողովը
նիստ գումարեց, եւ իր գլխաւոր գործն
եղաւ կատարել Վարչական Ժողովոց ընա-
րութիւնը: Քուէարկութեան մասնակցե-
ցան 78 հոգի, եւ կրօնական Ժողովոյ
անդամ ընտրուեցան. —

Քուէ

Տ. Վահրամ Արքեպ. Մանկունի 68

» Գրիգորիս » Յովհաննէսեան 68

- Տ. Գաբրէլ Եպիսկ. Ճէվահիրճեան 68
 » Սիբատ Մ. Վ. Գազադեան 66
 » Դրիգորիս Մ. Վ. Պալաքեան 65
 » Վարդան քչյ. Դերձակեան 65
 Իսկ հաւեւեւաւսականի մնացիւն
 Տ. Եղիշէ Արքեպ. Դուրեան 39
 » Յովհաննէս Արքեպ. Արշարունի 37
 » Վահան Մ. Վարդ. Յակոբեան 36
 » Ղեւոնդ Մ. Վարդ. Դուրեան 34
 » Աբրահամ քչյ. Էպէեան 36
 » Միքայէլ քչյ. Աշճեան 35
 » Դէորդ քչյ. Պաղպեան 35
 » Հմայեակ քչյ. Էքսէրճեան 35
 » Եղիազար քչյ. Պօղոսեան 34
 » Վահրամ քչյ. Յակոբեան 34
 » Դրիգոր քչյ. Ճէպէճեան 34
 » Դրիգոր քչյ. Երէցեան 31
 » Մեսրոպ քչյ. Տ. Մեսրոպեան 30
 » Սահակ քչյ. Պետրոսեան 30
 » Վաչտակ քչյ. Գալփաքճեան 28
 » Յակոբ քչյ. Տէլէճէկեան 27
 Կրօն. Ժողովի ընտրութեան ատեն 7
 Հոգի ձեռնպահ մնացին
 Իսկ Բաղ. Ժողովին անգամ ընտրուե-
 ցան. Գուէ
 Պետրոս Էֆ. Խորասանճեան 76
 Յակոբ Էֆ. Ստամպուլեան 76
 Պետրոս Էֆ. Հալաճեան 71
 Գալուստ Էֆ. Գուլումճեան 71
 Ռսկիան Էֆ. Մարտիրոսեան 67
 Լեւոն Էֆ. Տէմիրճիպաշեան 67
 Յար. Էֆ. Մոստիշեան 44
 Դէորդ Էֆ. Ասլանեան 43
 Դեղամ Էֆ. Տէր Կարապետեան 40
 Տօքթ. Տիգրան պէյ Աճէմեան 40
 Իսկ հաւեւեւաւսականի մնացիւն
 Տօքթ. Նազարեան 39
 Դէորդ Էֆ. Շիրոքեան 38
 Յարութիւն Էֆ. Գալփաքեան 37
 Դրիգոր Էֆ. Ֆէրհատ 36
 Եդ. Էֆ. Խորասան 36
 Յակոբ Էֆ. Էսայեան 36
 Արապչէս Էֆ. Յրնապլեան 36
 Սարգիս Էֆ. Էսմէրեան 35
 Ատենական գործողութեանց կարգին
 նոյնութեամբ ընդունուեցաւ նախաքննիչ
 զլեւաններու անդամաց անուանները պարու-
- նակող ցանկը. զոր կազմած էր Մայր
 Դիւանը
 Կարգացուեցաւ Նախաձեռնութեան
 Դիւանի տեղեկագիրը. Եկեղեց. երեսփո-
 խանայ ընտրութեան վրայ: Այդ տեղե-
 կագիրը. նախորդ ընտրութեանց վրայ
 հիմնուելով, անկարելի էր դատէր երես-
 փոխանաց զիտողութիւնը՝ Համագումար
 Ժողովին դիւան կազմելու իրաւունքէն
 զուրկ ըլլալուն մասին. նոյնպէս կը յայ-
 տարարէր թէ ընտրութիւնն ապօրէն հրո-
 չապելու. անզոր էր՝ ընտրուած երեսփո-
 խաններէն որոնց Ա. վիճակէն, եւ որոնց
 միւս վիճակներէն պակասեալներուն հա-
 մար ընտրուիլը չորոշուիլը. քանի որ այդ
 բաժանումն ընել Համագումարին անկ
 չէր. Իսկ երեսփոխաններու այն զիտողու-
 թիւնը թէ համամատականի միւսցած ընտ-
 րութիւնները նոյն օրը պէտք չէ կատար-
 ուէին, օրինական նկատուելով՝ Նախա-
 ձեռնութեան դիւանը կ'առաջարկէր միայն
 բոցարձակ առաւելութիւն չահողներուն
 ընտրութիւնը վաւերացնել, եւ միւսնե-
 րուն համար նոր քուէարկութիւն կատա-
 րել. Խնդիրը օրակարգ անցաւ:
 Միսաք Սուրեանի երեսփոխանութենէ
 արտաքսման մասին Հմայեակ Էֆ. Արամ-
 եանցի մէկ զիրը կարգացուեցաւ, որով
 կ'ազդէր մաքրագործուած տեսնել ժողո-
 վը. Կարծիքներու փոխանակութենէ
 ետքը, որոշուեցաւ եղած ամբաստանու-
 թիւնը Վարչութեան ընտրութեան յանձնել,
 ստիպողութեան պայմանով:
 ՀԱՄԲԱՐՁՄԱՆ տօնին առթիւ Տեղա-
 պահ Ս. Ե. օր պատարագեց Ազգ. Հի-
 ւանդանոցի մասարան մէջ, ի հանգիստ
 հոգւոց նոյն Հաստատութեան բարեյշա-
 տակ հիմնադրին եւ համայն հանգուցեալ
 բարեբարաց եւ յաւելչատութիւն կեն-
 դանեաց. Ներկայ էր հո՞ թաղութիւն
 ՀՐԴԵՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՎԱՆՔԻՆ
 ՄԷՋ. — Երուսաղէմի Պատր. Փոխանորդ
 Տ. Սիբատ Մ. Վ. Գազադեանի հազած
 հեռագիր մը կը ծանուցանէ թէ Բշ. գիշեր
 ժամը 1ին հրդհ ծագեր է Ս. Յակոբայ
 տաճարին մօտ Ս. Ստեփաննոսի մատու-

ռէն, անուշադրութեան հեծեւանքս բայց բարեբախտաբար չուտով առաջին առնուեր է եւ Ս. Յակոբի տաճարը է քիւսուեր: Այրած են գորգեր, կապերտներ եւն. Նիթական քիւսար 1000 ոսկի կը հաշուուի:

ԴՈՒՐԵԱՆ Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպ. 2000 զրչ. ամսաթոշակ յատկացուած է կառավարութեան կողմէ, իբրեւ նստորդ Պատրիարք, յառաջիկային աւելցուելու մտադրութեամբ, երբ պիտոճէն ներէ:

ՕՕՄ. ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎՆ անցեալ Եչի նիստին մէջ Զօհրապ եւ Տաղաւաբեան էֆ. ի խօսքերէն ետքը, որոնց ոյժ տուաւ. լուսամիտ Հօճա մը՝ հասան Ֆէհմի էֆ., որոշեց տարեկան 2000 ոսկի յաւելում մ'ընել զանազան ազգերու բարենպաստակ Հաստատութեանց պիւտճէին վրայ: Ասկէ պիտի օգտուին Ազգ. հիւանդանոցը, որուն պիւտճէն խախտած էր տարեկան նպաստին դադարումէն ի վեր, եւ Գալֆաեան որբանոցը, որուն նպաստը բոլորովին դադարելով անձկութեան մատնուած էր: Պատրիարքարանը անհրաժեշտ զիմուճը պիտի ընէ այս մասին:

ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐԸ իրենց ազգասիրութեան գորական ապացոյց մը տուին դարձեալ, Գալֆաեան Որբանոցի մայր Բրիտանիէ մայրապետի նպաստահաւաքութեան համար ըրած այցելութիւնը արդիւնաւորելով 28,421 զրչ. նպաստով մը, որուն 18332ը Գահիրէի ազգայիններէն, 7222ը Աղեքսանդրիայէն, եւ 2867ը ուրիշ գաւառային քաղաքներէ:

ԵՐԵՍՓ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Սկիւտար-Գուդկունճուգ-Իճասիէ միացեալ թաղերէն երեսփոխան ընտրուեցան Տեարք Լիւոն Տէմիրճիպաշեան եւ Եր. Խորասան, իսկ Պէօյիւք-Տէրէ — Եէնի - Մահալլէէն՝ Տեարք Յսլսէփ Գազազեան եւ Արշակ Ալպոյաճեան, բոլորն ալ Կեղրոնի ընտրիչներ, որոնք ստուար մեծամասնութեան շահեցան ընդդէմ ձախակողման ընտրիչի րոն: Իսկ Թօփ-Գաբունէն Ազգ. երեսփոխան ընտրուեցաւ Կարնոյ մպուս Գարեգին էֆ. Բասարմաճեան:

ՊԵՇԻԿ-ԹԱՇԻ Գանձանակի Մասնախումբին հրաւերով քարոզիչ Գեր. Տ. Հրանդ Վ. Յովասափեան անցեալ Կիր. օր պատարագեց թաղին Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ, ի հանգիստ հոգեոց նոյն Մասնախումբի հին եւ նոր անդամոց բոլոր ննջեցեալներուն: Եկեղեցւոյ արարողութեան եւ Հոգեհանգստեան պաշտամունքին աւարտումէն ետքը, քարոզիչ Հայր Սուրբ եւ քահանայ Հայրերը, Թաղ. Խորհրդոյ են Հոգաբարձութեան անդամք եւ ներկայ թաղեցիներ հրաւիրուեցան Մաքրունեան վարժարանի սրահը, ուր պատուասիրութիւններ եղան: Քարոզիչ Հայր Սուրբ այս առթիւ կրկին շեշտեց համարաշխութեան պէտքը թաղեցիներուն մէջ, յօգուտ Ազգ. վարժարանին եւ ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ: Յ. Մկրտիչեան էֆ. պատասխանեց պատշաճ բառերով: Թաղ. Խորհրդոյ ատենապետ Յովհ. էֆ. Ալայէմճեանի, եւ Հոգաբարձութեան անդամներէն Աղեքսանդր Գրյունեան էֆ. եւ այլոյ կողմէ շնորհաւորութիւններ ուղղուեցան Գանձանակի Պատ. Մասնախումբին, որ հազիւ 5-6 ամսուան կարճ ժամանակի մէջ 40 օտմ. ոսկիէն աւելի գումար մը հաւաքած է ժողովրդեան տասնոցներով: Այս առթիւ շեշտուեցաւ Պատ. Հոգաբարձութեան աշխատութիւնը՝ յօգուտ Ազգ. վարժարանին:

Սրտապնդող հաւաքոյթ մին էր կիրակի օրուան հանդէսը Պէշիկ թաղիին համար. բոլոր ներկաներուն ղէմբին վրայ կը կարգացուէր ներքին իղձ մը՝ բարեկարգ ու յառաջադէմ վիճակի մէջ տեսնելու վարժարանը, հասցնելու զայն անցեալի փայլուն օրերու բարձրութեան: Թաղականութիւն, Հոգաբարձութիւն, եւ Գանձանակի Մասնախումբ՝ համերաշխ գործունէութեամբ մը կը ձգտին այդ նպատակին: Իրենց մինչեւ զոյացած կործինքի եւ հայեացակէտի ոեւէ տարբերութիւն կը հարթուի նոյն հետայն, փոխադարձ համալիչ խօսքերով եւ ղիջումներով, որ անհրաժեշտ կը դառնան բաղձադուած օգտակար նպատակին իրագործումին համար:

Միակ ցաւալի կէտը՝ այդ հաւաքոյթին մէջ քացակայութիւնն էր Գանձանակի

Մասնախուժման անմիջական նախորդներուն Բոլոր ներկաներուն փափաքն էր նոյն պատուական երիտասարդներն ալ իրենց մէջ տեսնել: Նոյն թաղին զաւկները՝ բոլորն ալ՝ անխառն պիտի ըլլար ուրախութիւնը, եթէ ամենքն ալ ձեռք ձեռքի տուած աշխատելի կրթական գործին արդիւնաւորման:

Թերթիս տնօրէն-խմբագիրը, որ իրեն երկրորդ հայրենիք բնութեամբ է Պէշիկթաշը, եւ Պէշիկթաշիները կը նկատէ իր սրտակցորդ հայրենակիցները, այս ներքին բողձանքն ունի սրտին մէջ, եւ յարմար առիթ կը նկատէ սիրոյ եւ համերաշխութեան յորդորներ ուղղել բոլոր թաղեցիներուն, վերջ տալու համար սնամէջ հակառակութիւններու, որոնք «պաւաթ մը ջուրի մէջ փոթորիկ» են պարզապէս, եւ զոյւթեան պատճառ պէտք չէ ունենան այնպիսի անձերու մէջ որոնց բոլորին ալ աղնիւ, անկեղծ ձգտումներուն վրայ վըստահներ լացարձակապէս:

Տ. ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍԿ. ՍԱՐԱՃԵԱՆ, որ վանայ հոգեւոր հովիւ կարգուած էր վարչութեան կողմէ, Բշ. օր Պոլիս հասաւ եւ ուղղակի Օթէլ Պրիսպոլ իջաւ Տեղապահ Ս. Ե. Նոյն օրը Տ. Տրդատ քն զրկեց բարի գալուստ մաղթելու, եւ հրաւիրեց զինքը Պատրիարքարան, յայտնելով որ Երուսաղէմատան մէջ պատրաստութիւն տեսնուած է զինքն հիւրընկալելու համար Ամերիկահայը մեծ կորուստ մ'ըրաւ Սարաճեան Ս.ի մեկնումովը, կը գրէ Նիւ-Եորքէն թղթակից մը:

ՏԿԴ. ԹԻՐԵԱՔԵԱՆ ԽԱՆ, հմուտ բանասէր եւ գիտնական ու ճարտար բժիշկ, ծանօթ մանաւանդ աղգային կեանքի մէջ իր ունեցած օգտաշատ գործունէութեամբ, Բշ. օրը մայրաքաղաքս հասաւ Ֆրանսայէն, ուր կը գտնուէր ժամանակէ մը ի վեր:

ՊԷՏԷԼԱԹԸ ԱՍԲԷՐԻՅԷԻ ՊԱԳԱՅԱՆԵՐԸ ՋԵՋՈՒԱԾ. — Օսմ. Երեսփ. Ժողովին Դշ. ի նիստին մէջ, յետ կարճատեւ վիճարանութեան ընդունուեցաւ օրինական յօդուած մը, որով կը ներուին ոչ-խաւա-ներու զինուորական տուրքէ պարտե-

րուն միացորդները, որոնք կը հասնին 1,800,000 օսկիի գումար մը:

ՄՈՒՇԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ԿԸ ՀԱՐԿԱԴՐՈՒԻ ՀՐԱԺԱՐԻԼ. — Մուշի Առաջնորդ Տ. Ներսէս Եպիսկ. խարախանեան Մայիս 17 թուով Պատրիարքարան կը հեռագրէ թէ «Ներկայ վիճակին բերումով պաշտօնիս շարունակութիւնը անկարելի է. կը խնդրեմ որ հրաժարականս ընդունուի, եւ Առաջն. Փոխանորդ մը կարգուի, ընթացիկ գործերը երեսի վրայ չմնալու համար»: Պատրիարքարանէն հեռագրով պատասխանուեցաւ Տ. Ներսէս Եպ. ի, որ պաշտօնը շարունակէ, եւ հրաժարման տեղի տուող պատճառները տեղեկացնէ:

Տ. Ներսէս Եպ. նոյն թուականով հետեւեալն էս կը հեռագրէ Պատրիարքարան. — «Դոմարի մէջ սպաննուած Բուրդերու մասին Շէրիի դատարանին առջեւ տեսնուած արեան դինի դատաւարութեան միջոցին, դատարանը հաստատեց թէ սպաննիչները Դոմա գեղացի Հայեր չեն, այլ հին ատենի յեղափոխական ֆէտայիներ: Այս առթիւ քրիստոնեայ վկաներ ներկայացնել հարկ ըլլալով, Շէրիի դատարանը չընդունեց անոնց վկայութիւնը: Սահմանադրական կառավարութիւնը կը խնդրէ որ ինչպէս քաղաքային, նոյնպէս Շէրիի դատարաններուն առջեւ լսուին Բրիտանիաներու վկայութիւնները»:

ԽԱՍԹԷԽԱՆԷ ԽԱՆԻ խնդիրը կարելի եղածին չափ շուտով կարգադրելու համար, վարչապետ Հագգը բաշա յանձնարարութիւններ ըրեր է էվկաֆի պաշտօնատան:

ԴԵՐՋԱՆԷՆ կը գրեն Պատրիարքարան թէ Խուժար գիւղը ութ տարիէ ի վեր անհովիւ մնացած ըլլալով, մկրտութեան եւ թաղման հանգէտները առանց արարողութեան կատարուած են: Ուստի հոգեւոր պաշտօնեայ մը կը խնդրեն:

Արտօնատէր ՀՄԱՅԵԱՎ ԲԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՋԱՐՄԱՅՐ ԲԶՆՅ. ԿԷՋԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԷԱՃԵԱՆ

PLATE I

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՐԱՊԵՏԻ ԸՆՏԱՆԻՔ

«Ի ՊԵՏՍ ՀԱՅՈՑ ԸՆՏԱՆԵԱՅ»

Դրեց

ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Գ. Տպագր.

(Հայրիկի լուսանկարով)

Հրատարակութիւն Յ. ԳԸԼԸՃԵԱՆ գրատան Գին 7 ղշ.

ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏԻ ՆՈՐ ՎԷՊԸ

Ի Ն Ն Ս ՈՒ Ն Վ Ե Ց

Համակրելի վիպագրին այս վէպը, մինչեւ հիմա հրատարակուածներուն մէջ կրնայ համարուիլ ամենէն յուզիչը, ՍՍ. ՄԱԹԻՈՅ ՄԵԾ ՄԱՐՏՆՉՈՒՄԸ. ՊԱՆԲԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ. ՊՈԼՍՈՅ, մանաւանդ ԽԱՍԿԻՆԻ ԶԱՐԴԸ. իրական, պատկերներ, ցնցող մանրամասնութիւններով:

Ամէն օր կը հրատարակուի պրակ առ պրակ՝ պրակը 10 բարա: Աւարտելէն ետքը գինը պիտի կրկնապատկուի: Դիմել Պապը Այի, Իզսաւ խան Սեփան եֆ. Գիւրգենանի:

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ Պ. ՊԱԼԵՆՅ ԴՐԱՏԱՆ

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵԻՆԵԱՆ. — Հայունին.

— Հեղինակին լաւագոյն նորավէպերէն մէկ քանին՝ հատորի մը մէջ ամփոփուած, ուր հայ կեանքի տառապանքը կը պատկերացուի սրտայոյզ էջերու մէջ: Գին 5 ղշ.:

ԱՐԱՄ ԱՆՏՕՆԵԱՆ. — Շիրվանզահե. — Կենսագրական նոթեր իր գրական գործունէութեան յոբելեանին առթիւ: Գին 100 փր.:

ՏԻՐԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ. — Առաջնորդ ընթերցանութեան եւ քարզմ. Անգլ. լեզուի. — Դիւրին եղանակ Անգլ. լեզուն կարդալ, գրել եւ խօսելու համար: Բ. տարի: Գին 5 ղշ.:

ԹԵՐԶԵԱՆ. — Նոր փրական փրան-ոներէն, ի պէտս հայ ուսանողաց. — Գին 60 փարա: